ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 85/22
Ծառայությունների մատուցման մասին

ք.Երևան 02 նոյեմբերի 2022թ.

"Հայաստանի հանրային հեռուստաընկերություն" ՓԲԸ (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և

"Աութդոր Էֆեկտ" ՍՊԸ (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս տնօրեն Արթուր Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը վարձատրության դիմաց պարտավորվում է՝

1.1.1 Պատվիրատուի կողմից տրամադրված գովազդային նյութի հիման վրա և դրա որակական հատկանիշներին համապատասխան, տպագրել գովազդային պաստառները, որոնք նախատեսված են սկոռլեր տեսակի գովազդային վահանակներում տեղաբաշխման համար, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում նշված չափսի և քանակի համապատասխան (այսուհետ՝ «Տպագրական և տեղաբաշխման ծառայություն»)

1.1.2 Պատվիրատուի կողմից տրամադրված գովազդային նյութի հիման վրա և դրա որակական հատկանիշներին համապատասխան, տպագրել գովազդային պաստառները, որոնք նախատեսված են հասարակական տրանսպորտի կանգառասրահներում տեղաբաշխման համար, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում նշված չափսի և քանակի համապատասխան (այսուհետ՝ «Տպագրական և տեղաբաշխման ծառայություն»)

1.1.3 Պատվիրատուի կողմից տրամադրված 1 (մեկ) հատ 3D անիմացիոն գովազդային հոլովակը տեղաբաշխել Արամի փողոց համար 32 շենքի անկյունային հատվածում գտնվող գովազդային (Կատարողին պատկանող) LED էկրանին սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 3-ում նշված պայմաններով և կարգով (այսուհետ՝ տեղաբաշխման Ծառայություններ):

1.1.4 Իրականացնել գովազդային կրիչների միջոցով գովազդի տարածումը, սկսած 11.11.2022թ.-ից 1 (մեկ) ամիս ժամկետով (այսուհետ՝ «Գովազդի տարածման ծառայություն»):

2. Կողմերի պարտականությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2 Կազմակերպել սույն պայմանագրով նախատեսված գովազդային կրիչների սպասարկումը (մաքրության ապահովումը, լուսավորությունը՝ գիշերվա որոշ ժամերին) սույն պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

2.1.3 Գովազդային պաստառի վնասման դեպքում իր ուժերով անհապաղ վերականգնել վնասված գովազդային պաստառը:

2.1.4 Պայմանագրի գործողության ավարտից հետո իր ուժերով ապամոնտաժել տեղադրված գովազդը, ինչի համար Պատվիրատուն որևէ հավելյալ վճարում չի կատարում:

2.1.5 Անհապաղ վերացնել Պատվիրատուի կողմից Գովազդի տարածման ծառայություններում հայտնաբերված թերությունները:

2.1.6 Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել Պատվիրատուի կողմից տրամադրված Գովազդի բովանդակությունից շեղում:

2.1.7 Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացնել Պատվիրատուին ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Կատարողի ունեցած թույլտվությունները:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Պատվիրատուից պահանջել ժամանակին կատարելու սույն պայմանագրով սահմանված վճարումները:

2.2.2 Դադարեցնել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը, եթե Պատվիրատուն ժամանակին չի կատարում վճարումները:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1 Առնվազն 3 /երեք/ օր առաջ՝ մինչև Տպագրական ծառայության մատուցումը տրամադրել Կատարողին վերջինիս հետ նախապես համաձայնեցված ֆորմատով գովազդային նյութը:

2.3.2 վճարել Կատարողին սույն պայմանագրով սահմանված կարգով:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1 Կատարողից պահանջել պատշաճ կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները:

2.4.2 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.3 Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

2.4.4 Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.4.5 Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Կատարողին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:

2.4.6.1 Կատարողը թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն:

2.4.6.2 Կատարողը Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,

2.4.6.3 Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

3. <u>Պայմանագրի արժեքը և ծառայությունների հանձնման-ընդունման կարգը</u>

3.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 11 140 800 (տասնմեկ միլիոն մեկ հարյուր քառասուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից՝

3.1.1. 1 972 800 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, կազմում է մեկանգամյա տպագրական և տեղաբաշխման ծառայության արժեքը:

3.1.2. 9 168 000 (ինը միլիոն մեկ հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ կազմում է գովազդի տարածման ծառայության արժեքը:

3.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված գումարը վճարում է հետևյալ կարգով.

3.2.1. Պայմանագրի ընդհնուր արժեքի 50%-ը որպես կանխավճար՝ մինչև 21.11.2022թ.,

3.2.2. Պայմանագրի ընդհանուր արժեքի մնացած մասը՝ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուն Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով: Ծառայությունների դիմաց վճարելու Պատվիրատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Պատվիրատուի բանկային հաշվից ելքագրման պահին:

3.4. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կրում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

3.5. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողը պարտավորվում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.6. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և

3.6. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:
3.7. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.6. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.4.6 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:
3.8. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, դեպքերում և չափերով:
4.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում Կատարողը Պատվիրատուի պահանջի դեպքում վճարում է տույժ, յուրաքանչյուր ուշացման օրվա համար Ծառայությունների մատուցման ընդհանուր արժեքի 0.13 (զրո ամբողջ տասներեք) տոկոսի չափով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության և հեռարձակման միջոցների աշխատանքի դադարեցումը, եթերի խափանումները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը, այդ մասին Կատարողին նախապես 15 օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով: Այս դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև սույն պայմանագրի լուծումը փաստացի մատուցված ծառայությունները վճարը:
7.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում Գովազդային պաստառներում առկա տեղեկատվության, նյութերի բովանդակության համար: Երրորդ անձանց կողմից Կողմերին կամ Կողմերից որևէ մեկին ուղղված ցանկացած պահանջ, որը կապված կլինի Գովազդային պաստառների

բովանդակության հետ, Պատվիրատուն պարտավորվում է վերը նշված բոլոր պահանջները կարգավորել ինքնուրույն և իր հաշվին:

7.3. Պատվիրատուն երաշխավորում և հավաստիացնում է, որ Գովազդային պաստառներում առկա տեղեկատվության և նյութերի տեղադրումը և տարածումը թույլատրելի է և արգելված չի ՀՀ գործող իրավական ակտերով: Պատվիրատուն հավաստիացնում է, որ Գովազդային պաստառներում առկա նյութերի տարածումը չի խախտում երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը:

7.4. Կատարողը երաշխավորում և հավաստիացնում է, որ տիրապետում է և ունի սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները պատշաճ մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները:

7.5. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, համաձայնությունները, և այլ անհրաժեշտ միջոցները:

7.6. Պայմանագրի Հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասերը:

7.7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Կատարողը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

7.8. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը:

7.9. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, և այն Կողմերի համար իրավաբանական ուժ կստանա միայն Կողմերի (կամ նրանց) լիազոր անձանց կողմից երկկողմանի ստորագրման վերջին ամսաթվից, որոնք կնքման պահից հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը: Ցանկացած միակողմանի գրություն և դրան տրված պատասխան կամ լռություն չի կարող որակվել որպես սույն պայմանագրի փոփոխություն կամ լրացում:

7.10. Եթե սույն պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, ապա նման որոշումը չի ազդում մյուս կետերի վրա և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը: Կողմերը համաձայն են, որ սույն պայմանագրի կետերից որևէ մեկը ուժը կորցրած կամ անլուծելի լինելու դեպքում, նրանք անհապաղ բանակցությունների միջոցով կբարելավեն նշված կետը՝ այն առավելագույն ձևով արտահայտելով Կողմերի իրական մտադրությունը կապված տվյալ հարցի հետ:

7.11. Այն պայմանները, որոնք ներառված չեն սույն պայմանագրում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

7.12. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

7. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
"Հայաստանի հանրային հեռուստաընկերություն" ՓԲԸ	"ԱՌԻԹԴՈՐ ԷՖԵԿՏ" ՍՊԸ
ք.Երևան, Գ. Հովսեփյան 26	ք.Երևան, Վարդանանց 18-6
"Ինեկոբանկ" ՓԲԸ	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
հ/հ 2050022082671001	հ/հ 19300470314900
ՀՎՀՀ 01540062	ՀՎՀՀ 02615612
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Հ. Մովսիսյան	Ա.Կարապետյան

Հավելված 1
Առ 02.11..2022թ. թիվ 85/22 կնքված Պայմանագրի

Սկոռլլեր տեսակի գովազդային
Վահանակներ

Գովազդային վահանակների հասցեները	Գովազդային կրիչների քանակը	Գովազդային պաստառների քանակը	Գովազդային պաստառների չափսերը (մ)
Աբովյան 31	3	6	1.20 x 2.22
Աբովյան 34	2	4	1.20 x 2.22
Թումանյան 11	1	3	1.02 x 1.81
Խանջյան-Սայաթ-Նովա	1	2	1.20 x 2.22
Մաշտոցի պող. / Կոնսերվատորիայի դիմաց	6	12	1.20 x 1.80
Մաշտոց 43-Իսահակյան	2	4	1.20 x 2.22
Մոսկովյան 10-Մաշտոց	1	2	1.20 x 2.22
Մոսկովյան 33-Բաղրամյան	2	4	1.20 x 1.80
Մոսկովյան-Աբովյան (Պուշկին դպրոցի մոտ)	3	6	1.20 x 1.80
Սայաթ-Նովա պող.	6	12	1.20 x 1.80
Աբովյան փող.	12	24	1.20 x 1.80
Մաշտոցի 29	1	2	1.02 x 1.81
Մաշտոցի 42	1	2	1.02 x 1.81
Բաղրամյան պող. (Santa Fe-ի մոտ)	1	2	1.02 x 1.81
Բաղրամյան պող. (Վերնիսաժի մոտ)	1	2	1.02 x 1.81
Մաշոտցի պող. (Կոնս. դիմաց)	1	2	1.02 x 1.81
Ամիրյան փող.	1	2	1.02 x 1.81
Խանջյան փող. / Վերնիսաժի մոտ	1	2	1.02 x 1.81
Սայաթ-Նովա-Տերյան	1	2	1.02 x 1.81
Բաղրամյան-Պռոշյան	1	2	1.02 x 1.81
Տ.Մեծի պող. / Rossia Mall-ի հանդիպակած մայթ	1	2	1.02 x 1.81
Աբովյան 33	1	2	1.02 x 1.81
Գր.Լուսավորչի փող.	1	2	1.02 x 1.81
Աբովյան փող. / Բժշկական համալսարանի դիմաց	1	2	1.02 x 1.81
Կորյունի փող. / Բժշկական համալսարանի դիմաց	1	2	1.02 x 1.81

Պատվիրատու
"Հայաստանի հանրային հեռուստաընկերություն"
ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Հ.Մովսիսյան

Կատարող
"ԱՌԻԹԴՈՐ ԷՖԵԿՏ" ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Կարապետյան

Հավելված 2
Առ 02.11.2022թ. թիվ 85/22 կնքված Պայմանագրի

Հասարակական տրանսպորտի կանգառասրահների գովազդատուփեր

N	Գովազդային վահանակների հասցեները	Գովազդային պաստառների քանակը	Գովազդային պաստառների չափսերը (մ)
1	Բաղրամյան պող. / Չեխովի անվան դպրոցի հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
2	Աթենքի փող. / Հրազդան մարզադաշտի հարևանությամբ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
3	Կինյան 12 շենքի մոտ / Օրբելի խաչմերուկ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
4	Կինյան 1 շենքի մոտ / SAS supermarket-ի հարևանությամբ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
5	Կինյան 17 շենքի մոտ / Բարեկամության հրապարակի/մետրոյի մոտ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
6	Կոմիտաս 3 շենքի մոտ / HSBC-ի հարևանությամբ, Գյուլբենկյան խաչմերուկ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
7	Կոմիտաս 22 շենքի մոտ / Վաղարշյան խաչմերուկ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
8	Բաղրամյան պող. / Կամոի անվան դպրոցի հարևանությամբ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
9	Բաղրամյան պող. / Կամոի անվան դպրոցի հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
10	Սեբաստիա-Տիչինայի խաչմերուկ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
11	Սեբաստիա-Լենինգրադյան-Սարգսյան խաչմերուկ / այգու հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
12	Մալաթիա-Սեբաստիա հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
13	Լենինգրադյան 2 շենքի դիմաց / Համալիրի հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
14	Լենինգրադյան 2 շենքի հանդիպակած մայթ / Համալիրի դիմաց	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
15	Դ. Անհաղթի 11 շենքի դիմաց / թաղապետարանի հարևանությամբ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
16	Գայի-Մոլդովական-Լվովյան խաչմերուկ (ներքևից ձախ կողմում)	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
17	Արշակունյացի պող. / Ջերմուկ Գրուպ-ի դիմաց	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
18	Տ.Պետրոսյանի 48 շենքի դիմաց / Դավթաշեն	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
19	Աճառյան 32 շենքի դիմաց / Natali Farm դեղատան մոտ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10
20	Հովսեփյան փող. / Հ1 հեռուստաընկերության հանդիպակած մայթ	2	1.10 x 1.60
		1	2.00 x 2.10

Պատվիրատու
"Հայաստանի հանրային հեռուստաընկերություն"
ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան

Կատարող
"ԱՈՒԹԴՈՐ ԷՖԵԿՏ" ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Կարապետյան

Հավելված 3

Առ 02.11..2022թ.
թիվ 85/ 22 կնքված Պայմանագրի

Հոլովակ(ների) տևողությունը (հաշվարկը վարկյաններով)	Հոլովակ(ների) տարբերակների քանակը (հատ) ցուցադրման ենթակա	Հոլովակ(ների) հեռարձակման քանակը (հաշվարկը մեկ օրում՝ անգամ)	Օրվա ցուցադրման ժամերն են
15 (տասնհինգ)	1 (մեկ) հատ	180 (մեկ հարյուր ութսուն)	09:00-ից մինչև 24:00-ն

Պատվիրատու
"Հայաստանի հանրային հեռուստաընկերություն"
ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան

Կատարող
"ԱՈՒԹԴՈՐ ԷՖԵԿՏ" ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Կարապետյան